ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 29.10.2020թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/231

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան
Մասնակից՝ «Մ. Բուատ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Մ. Բուատ» ՍՊԸ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Տ. Վահրադյանի, ներկայացուցիչ՝ Վ. Հայրապետյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/123» ծածկագրով գնանշման հարցում, Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն և Կենտրոն վարչական շրջանների եզրաքարերի վերանորոգման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 29.09.2020թ.-ի թիվ 26/26-1/14699-2020 գրությամբ «Մ. Բուատ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 18.09.2020թ.-ի թիվ 01/61-18355 գրության հիման վրա, 29.09.2020թ.-ին «Մ. Բուատ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 29.09.2020թ.-ին:

Բողոքներ քննող անձի 29.09.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/231 համարի ծածկագիրը:

09.10.2020թ.-ին և 29.10.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 09.10.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 29.10.2020թ.-ին:

2. Երևանի քաղաքապետարանի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

Երևանի քաղաքապետարանը 18.09.2020թ.-ի թիվ 01/61-18355 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Տեղեկացնում եմ, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/123» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «Մ. ԲՈԻԱՏ» ՍՊԸ-ն (այսուհետև՝ Մասնակից):

Ընթացակարգի շրջանակներում Մասնակցի կողմից ներկայացված հայտում արձանագրվել է անհամապատասխանություն հրավերի պահանջների նկատմամբ:

«Մ. ԲՈԻԱՏ» ՍՊԸ-ն չի ներկայացրել առաջին չափաբաժնի մասով հրավերով պահանջվող հայտի ապահովումը բանկային երաշխիքի (հավելված 3) կամ կանխիկ փողի տեսքով:

Գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 41-րդ կետի պահանջով ծանուցել է Մասնակցին մեկ աշխատանքային

օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Մասնակցի կողմից սահմանված ժամկետում չի շտկվել հայտում առկա անհամապատասխանությունը և գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով Կարգի 42-րդ կետի պահանջով՝ առաջին չափաբաժնի մասով մերժել է Մասնակցի կողմից ներկայացված հայտը:

Վերոգրյալ իրավական հիմքերով պայմանավորված՝ ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետով, առաջարկում եմ Մասնակցի նկատմամբ կիրառել Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/123» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Մ. Բուատ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Մ. Բուատ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 29.09.2020թ.-ի գրությամբ դիմել է «Մ. Բուատ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 29.09.2020թ.-ի թիվ 26/26-1/14699-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստին:

Մասնակիցը 08.10.2020թ.-ին ներկայացրած առարկությամբ հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի կարիքների համար Երևան քաղաքի Կենտրոն և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների փողոցներում եզրաքարերի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել էր ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/123 ծածկագրով գնանշման հարցում երկու չափաբաժնով (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Վերոնշված Ընթացակարգին, 1-ին չափաբաժնով մասնակցության հայտ են ներկայացրել «Մ. Բուատ» ՍՊԸ-ն և «Լեգենդ քնսթրաքշն» ՍՊԸ, իսկ 2-րդ չափաբաժնով՝ «Մ. Բուատ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) և «Հայկ Համոլիկյան Վարդանի» ԱՁ:

Գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման հանձնաժողովի 04.09.2020թ. ժամը 11:00 տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրությամբ, գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով ներկայացված հայտը հիմնավորող փաստաթղթերը

արձանագրել է, որ Ընկերությունը չի ներկայացրել 1-ին չափաբաժնի մասով հրավերով պահանջվող հայտի ապահովումը բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի տեսքով: Եվ ելնելով դրանից որոշել է կասեցնել նիստը և առաջարկել Ընկերությանը մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել առկա անհամապատասխանությունը: Արձանագրել է նաև, որ Ընկերությունը երկու չափաբաժիններով էլ ներկայացրել է աշխատանքների կատարման ամենափոքր գնառաջարկները:

Ընթացակարգի հանձնաժողովի 08.09.2020թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ հաշվի առնելով, որ Ընկերությունը հանձնաժողովի պահանջած հայտի ապահովումը չի ներկայացրել, որոշել է Ընկերության հայտը 1-ին չափաբաժնի մասով գնահատել անբավարար և այդ չափաբաժնով հաղթող է ճանաչել բավարար գնահատված հաջորդաբար երկրորդ տեղ զբաղեցրած մասնակից «Լեգենդ քնսթրաքշն» ՍՊԸ-ին, իսկ 2-րդ չափաբաժնով՝ Ընկերությանը:

Նախ հասկանալու համար Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու իրավական հիմքերն առկա են թե ոչ, հարկ է մեջբերել «Գնումների մասին» օրենքի համապատասխան դրույթները: Մասնավորապես, «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում սահմանվում է հետևյալը.

«…Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:»

Վկայակոչվածից կարող ենք փաստել, որ օրենսդիրը հստակ սահմանել է այն երեք դեպքերը, որոնց դեպքում մասնակիցը ընդգրկվում է Ցուցակում: Նախ անդրադառնամ նշված հիմքերին բացառման սկզբունքով: Հաշվի առնելով, որ Ընկերությունը տվյալ չափաբաժնի մասով չի ընտրվել հաղթող մասնակից և որ Ընկերությունը հայտը բացելուց հետո չի հրաժարվել գնման գործընթացին հետագա մասնակցությունից, այլ ընդհակառակը պայքարում էր հաղթող ճանաչվելու համար (դրա մասին են վկայում այն, որ երկու անգամ բողոք է ներկայացրել տվյալ 1-ին չափաբաժնով իր հայտն անբավարար գնահատելու

որոշումը վերացնելու համար), միանշանակ է դառնում, որ «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ «բ» և «գ» ենթակետերով նախատեսված հիմքերը բացակայում են:

Անդրադառնալով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» հիմքին, պետք է արձանագրեմ, որ նշված հիմքը պարունակում է երկու իրար հետ չկապված գործողություններ, որոնց առկայության դեպքում վրա են հասնում երկու համապատասխան հետևանքներից մեկը: Ընդ որում, գործողության և համապատասխան հետևանքի միջև պետք է լինի անպայման պատճառահետևանքային կապ: Դրանք են.

1) խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը

կամ

2) խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ընթացակարգի փաստերից ելնելով, քանի որ անվիճելի է Ընկերության հետ 1-ին չափաբաժնով պայմանագիր կնքված չլինելը, հետևաբար պայմանագրով նախատեսված պարտավորություն վերջինս չէր կարող խախտել ու պայմանագրի միակողմանի լուծելու հետևանքը ևս չէր կարող առաջանալ: Այսինքն, այս հիմքը ևս միանշանակ պետք է բացառել:

Այսպիսով միակ հիմքը, որը քիչ թե շատ կարող է վերաբերվել սույն ընթացակարգին դա գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտումն է, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Նախ հասկանանք, թե ինչ ասել է «գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն»:

Քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածը սահմանում է.

« 1. Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն, այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

2. Պարտավորությունները ծագում են պայմանագրից, վնաս պատճառելու հետևանքով և սույն օրենսգրքում նշված այլ հիմքերից:»

Քանի որ սույն ընթացակարգի հետ կապված կնքված պայմանագիր չկա, պատճառված վնաս առկա չէ, հետևաբար պարտավորության ծագման համար մնում է, որ

առկա լինի միայն քաղաքացիական օրենսգրքով սահմանված որևէ այլ հիմք, իսկ քաղաքացիական օրենսգրքում առկա չէ որևէ դրույթ, որը կվերաբերվի գնումների ընթացակարգին: Այսինքն, քաղաքացիական օրենսգրքի դրույթներից ելնելով

Ընթացակարգի մասնակցի համար գնումների գործընթացում որևէ պարտավորություն սահմանված չէ, հետևաբար նման պարտավորություն չէր կարող լինել:

Չնայած, որ այլ օրենքներում պարունակվող քաղաքացիական իրավունքի նորմերը պետք է համապատասխանեն քաղաքացիական օրենսգրքին (քաղ. օր. հոդված 1), բայց հաշվի առնելով, որ գնումների գործընթացը կազմակերպում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի և Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգով (այսուհետ նաև՝ Կարգ), որպես գնման ընթացակարգի առանձնահատկությունները սահմանող իրավական ակտեր կանդրադառնամ նաև այդ ակտերով ընթացակարգի մասնակցի համար սահմանվող պարտավորություններին: Նախ, եթե ուսումնասիրենք «Գնումների մասին» ՀՀ օրենքը, Կարգը և Ընթացակարգի հրավերը կտեսնենք, որ հայտի ապահովումն որպես այդպիսին մրցույթի մասնակցի կողմից ներկայացնելը սահմանված չէ որպես պարտավորություն, ի տարբերություն օրինակ պայմանագրի ապահովման, որը մրցույթի մասնակիցը հաղթող ճանաչվելուց և պայմանագիր կնքելու առաջարկ՝ ստանալուց հետո պարտավոր է ներկայացնել սահմանված ժամկետում (Ընթացակարգի հրավերի 10.1 կետ). Ընթացակարգի հրավերի 4.3 կետը սկսվում է «մասնակիցը հայտով ներկայացնում է» արտահայտությամբ: Ինչպես տեսնում ենք չկա պարտավորող որևէ պայման, հետևաբար այդ ցանկից որևէ փաստաթուղթ չներկայացնելը չի կարող դիտարկվել ստանձնած պարտավորության խախտում: Հայտի ապահովումը, դա հայտարարված մրցույթի արժեքից կախված անհրաժեշտ փաստաթուղթ է, ինչպես հրավերով պահանջվող այլ փաստաթղթեր: Հայտի ապահովում ներկայացնելը պատվիրատուի կողմից պահանջ է, ինչպես հրավերով պահանջվող այլ փաստաթղթերը, սակայն դա չի նշանակում, որ հայտ ներկայացնողը ստանձնել է որևէ պարտավորություն: Անհրաժեշտ փաստաթղթերը չներկայացնելու հետևանքով մասնակցի հայտը կհամարվի անբավարար և նա մրցույթը չի հաղթի: Եթե գնանք այլ տրամաբանությամբ, որ հրավերով ներկայացման համար անհրաժեշտ փաստաթղթերից որևէ մեկը (եթե նույնիսկ հայտի ապահովում չկա) չներկայացնելը կա պատշաճ ձևով չներկայացնելը ստանձնած պարտավորության խախտում է, ապա բոլոր անբավարար գնահատված հայտերով բոլոր մասնակիցները պետք է ներառնեն Ցուցակում, ինչն իրավաչափ չէ: Ամփոփելով, պետք է փաստեմ, որ գնումների գործընթացը կարգավորող իրավական ակտերի վերլուծությունից ելնելով, հայտի ապահովում ներկայացնելը գնումների ընթացակարգով ստանձնած պարտավորություն չէ, այլ մրցույթի մասնակցության պայման:

Թեև ինչպես նշեցի գտնում եմ, որ ընդհանրապես հայտի ապահովում երկայացնելը ընթացակարգի մասնակցի համար սահմանված պարտավորություն չէ բայց եթե նույնիսկ մի պահ ընդունենք, որ դա պարտավորություն է, ապա սույն Ընթացակարգի դեպքում Ընկերությունը հայտի ապահովում ներկայացնելու պարտավորություն չի ունեցել: Փորձեմ մանրամասնել:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն.

«9) եթե գնման հայտով տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության գինը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա հայտի ապահովում չի ներկայացվում, իսկ պայմանագրի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով: Եթե տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության նախահաշվային գինը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա ինչպես հայտի, այնպես էլ պայմանագրի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:...»

Նայն Կարգի նույն կետի 17-րդ ենթակետի «ա» պարբերությունը սահմանվում է.

«17) գնման ընթացակարգը չափաբաժիններով կազմակերպվելու դեպքում հայտերի գնահատումը և ընտրված մասնակցի որոշումն իրականացվում են ըստ առանձին չափաբաժինների: Եթե չափաբաժիններով կազմակերպված գնման ընթացակարգի շրջանակում՝

ա. մասնակիցը հայտ ներկայացնում է մեկից ավելի չափաբաժինների համար, ապա կարող է ներկայացնել՝ ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի համար առանձին, այնպես էլ մեկ հայտի ապահովում՝ բոլոր չափաբաժինների համար: Մեկ հայտի ապահովում ներկայացվելու դեպքում դրա գումարը հաշվարկվում է ներկայացված չափաբաժինների գնային առաջարկների հանրագումարի նկատմամբ: Եթե հանրագումարը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, սակայն ըստ առանձին չափարաժինների ներկայացված գնային առաջարկները չեն գերազանցում այդ չափը, ապա հայտի ապահովում չի ներկայացվում»

Նույնը սահմանում է նաև ընթացակարգի հրավերի 7.2 կետի «ա» պարբերությունը:

Վերը նշվածից պարզ է դառնում, որ Կարգով որպես ընդհանուր կանոն սահմանվել է հայտի ապահովում ներկայացնելու պահանջ, բոլոր այն դեպքերում, երբ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության գինը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը: Սակայն Կարգով սահմանվել է նաև որոշակի

բացառություն ընդհանուր կանոնից, այն դեպքում երբ գնման Ընթացակարգը կազմակերպվում է չափաբաժիններով:

Քննարկվող Ընթացակարգի պարագայում մրցույթը կազմակերպվել է երկու չափաբաժիններով: Այսինքն, այդ Ընթացակարգի նկատմամբ կիրառելի է Կարգի 32-րդ 17-րդ ենթակետի «ա» պարբերությունը և որ նույն է հրավերի 7.2 կետի «ա» պարբերությունը:

Նախ հարկ է նշել, որ Ընկերության կողմից 1-ին չափաբաժնով ներկայացվել է բազային միավորի տասնապատիկը չգերազանցող գնառաջարկ, որը Կարգի 32-րդ կետի 9-րդ ենթակետի առաջին նախադասության իմաստով հայտի ապահովում չի պահանջում: Այսինքն, Ընկերության կողմից հայտի ապահովում չներկայացնելը 1-ին չափաբաժնով ոչ թե թերություն էր, որը պետք է շտկվեր, այլ Կարգի պահանջի պահպանում:

Բացի դրանից, Ընկերությունը Ընթացակարգին մասնակցել է երկու չափաբաժիններով: 1-ին չափաբաժնի ընդհանուր գինը առաջարկվել է 9.999.000 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ, իսկ երկրորդ չափաբաժնի համար՝ 3.384.000 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ: Ինչպես տեսնում են չափաբաժիններից ոչ մեկը առանձին առանձին չի գերազանցում բազային միավորի տասնապատիկը, սակայն գերազանցում է այն՝ երկուսը միասին: Նման դեպքում կիրառելի է Կարգի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «ա» պարբերության վերջին նախադասությունը, ըստ որի եթե չաւփաբաժինների հանրագումարը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, սակայն ըստ առանձին չաւիաբաժինների ներկայացված գնային առաջարկները չեն գերազանցում այդ չափը, ապա հայտի ապահովում չի ներկայացվում: Այսինքն, այս պարագայում ևս Ընկերությունը չուներ պարտավորություն հայտի ապահովոա ներկայացնելու, քանի որ այն չներկայացնելու պայմանը սահմանվում է և Կարգով, և Ընթացակարգի հրավերով: Նշվածի հիմքով Ընկերությունը գտնում է, որ Ընթացակարգի հանձնաժողովի կողմից Ընկերության ներկայացրած հայտը 1-ին չափաբաժնի մասով զուտ հայտի ապահովման բացակայության պատճառով անբավարար գնահատելը չէր բխում Կարգի պահանջներից և Ընթացակարգի հրավերից, հետևաբար Ընկերությունը պետք է ճանաչվեր հաղթող: Հանձնաժողովի որոշումն ընկերությունը բողոքարկում էր հենց այս հիմքով:

Այսպիսով, պետք է նշեմ, որ եթե նույնիսկ ընդունենք, որ հայտի ապահովում ներկայացնելը որոշ դեպքերում Կարգով սահմանված պարտավորություն է, ապա սույն Ընթացակարգի պարագայում այդ պարտավորությունը բացակայում էր: Այսինքն, բացակայում է նաև գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտումը (չկա պարտավորություն, չկա խախտում):

Եթե ամփոփենք սույն առարկություններն ամբողջապես, ապա հարկ է արձանագրել, որ սույն Ընթացակարգի փաստերը համադրելով «Գնումների մասին» օրենքի դրույթների հետ ակնհայտ է դառնում, որ առկա չէ օրենքով սահմանված որևէ հիմք Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներգրավելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի դրույթներով խնդրում եմ սույն առարկություններում բերված իրավական հիմնավորումները հաշվի առնելով «Մ. Բուատ» ՍՊ ընկերությանը չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում:»:

4. <u>ՍՑ-LO-2020/231 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն և Կենտրոն վարչական շրջանների եզրաքարերի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 27.08.2020թ.-ին հայտարարվել է «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/123» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Մ. Բուատ» ՍՊԸ-ն:

iii. «Մ. Բուատ» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/123» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 04.09.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 4.1-րդ համաձայն՝ «Մ. Բուատ» ՍՊԸ-ն չի ներկայացրել առաջին չափաբաժնի մասով հրավերով պահանջվող հայտի ապահովումը բանկային երաշխիքի (հավելված 3) կամ կանխիկ փողի տեսքով: ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի համաձայն գնահատող հանձնաժողովը որոշել է կասեցնել նիստը և առաջարկել Մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել

առկա անհամապատասխանությունը: Սահմանված ժամկետում անհամապատասխանությունը չշտկելու դեպքում հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի:

v. Հանձնաժողովի քարտուղարի կողմից armeps.am կայքի միջոցով 04.09.2020թ.-ին նույնաբովանդակ ծանուցում է ուղարկվել Մասնակցին m.buat@yandex.ru և m.buat@bk.ru էլ. փոստի հասցեներին:

vi. Հանձնաժողովի 08.09.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովն արձանագրել է, որ «Մ. Բուատ» ՍՊԸ-ի կողմից հրավերով սահմանված ժամկետում՝ 07.09.2020թ.-ը ներառյալ, չի շտկվել հայտում առկա անհամապատասխանությունը, ինչի արդյունքում Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը, որոշել է առաջին չափաբաժնի մասով «Մ. Բուատ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել:

vii. Երևանի քաղաքապետարանը Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 18.09.2020թ.-ի թիվ 01/61-18355 գրությամբ:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 29.09.2020թ.-ի թիվ 26/26-1/14699-2020 գրությամբ «Մ. Բուատ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան

հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի կողմից Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն և Կենտրոն վարչական շրջանների եզրաքարերի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 27.08.2020թ.-ին հայտարարվել է «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/123» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Մ. Բուատ» ՍՊԸ-ն Հանձնաժողովի 04.09.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 4.1-րդ համաձայն՝ չի ներկայացրել առաջին չափաբաժնի մասով հրավերով պահանջվող հայտի ապահովումը բանկային երաշխիքի (հավելված 3) կամ կանխիկ փողի տեսքով, ինչով պայմանավորված որոշվել է կասեցնել նիստը և առաջարկել Մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել առկա անհամապատասխանությունը, ինչի մասին Հանձնաժողովի քարտուղարի կողմից armeps.am կայքի միջոցով 04.09.2020թ.-ին ծանուցում է ուղարկվել վերջինիս m.buat@yandex.ru և m.buat@bk.ru էլ. փոստի հասցեներին: Սակայն Հանձնաժողովի 08.09.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովն արձանագրել է, որ «Մ. Բուատ» ՍՊԸ-ի կողմից հրավերով սահմանված ժամկետում՝ 07.09.2020թ.-ը ներառյալ, չի շտկվել հայտում առկա անհամապատասխանությունը, ինչի արդյունքում առաջին չափաբաժնի մասով «Մ. Բուատ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժվել է:

Երևանի քաղաքապետարանը Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 18.09.2020թ.-ի թիվ 01/61-18355 գրությամբ՝ Կարգի 45-րդ կետով սահմանված 5 աշխատանքային օրյա ժամկետի խախտմամբ:

Վերոգրյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների համադրման արդյունքում, Բողոքներ քննող անձը հաստատված է համարում, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել 08.09.2020թ.-ին՝ Մասնակցի հայտը մերժելու հիմքով, սակայն Երևանի քաղաքապետարանը Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 18.09.2020թ.-ի թիվ 01/61-18355 գրությամբ՝ Կարգի 45-րդ կետով սահմանված 5 աշխատանքային օրյա ժամկետի խախտմամբ:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Ամբողջացնելով վերը թվարկված իրավական նորմերը, դրանց և գործում առկա փաստերի համադրման արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ (պարտադիր) դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացված որոշումներից մեկով կարևորել է, որ Հայաստանի Հանրապետության՝ որպես իրավական պետության կարևորագույն հատկանիշ է այն, որ սահմանադրական մակարդակով պետությունը հավաստում է իր հավատարմությունն այդ տեսությանը, ճանաչում և ամրագրում է իր կախվածությունն իրավունքից, իրավունքի գերակայությունը՝ պետական իշխանության նկատմամբ: Իրավական պետության և իրավունքի գերակայության սկզբունքը, ի թիվս այլոց, դրսևորվում է նրանում, որ Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների՝ որպես անմիջականորեն գործող իրավունք լինելու գաղափարը: Այն իր արտացոլումն է գտել նաև 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 5-րդ (Իրավական նորմերի աստիճանակարգությունը) և 6-րդ (Օրինականության սկզբունքը) հոդվածներում՝ մասնավորապես ամրագրելով, որ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և որ **պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու**

միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով *(տե՛ս, «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՍՊԸ-ն ընդդեմ Էդիկ Հակոբյանի թիվ ԼԴ/0509/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.07.2018 թվականի որոշումը):*

Ընդ որում, պետաիշխանական լիազորություններով օժտված ցանկացած մարմնին, իր գործառնական կարգավիճակին համապատասխան, օրենքով և նորմատիվ իրավական ակտերով կարող են վերապահվել ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական լիազորություններ՝ պայմանավորված սահմանադրաիրավական այն հիմնադրույթի իրացման անհրաժեշտությամբ, ըստ որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով, չպետք է հակասեն և պետք է համապատասխանեն Սահմանադրությանը, օրենքներին կամ նորմատիվ իրավական ակտերին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 45-րդ կետի դրույթներով սահմանված իմպերատիվ (պարտադիր) դրույթները, քանի որ, ինչպես վերը նշվեց, Կարգի 45-րդ կետի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու իրավահարաբերության առկայությունը և դրանից հետո նոր միայն ըստ էության անդրադառնալ Պատվիրատուի կողմից ներկայացված Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված համապատասխան հիմքերի օրինաչափությանը: Այլ կերպ ասած՝ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու Ընթացակարգի քննությունը, Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետների խախտման արդյունքում, սահմանափակվում է ընթացակարգային նորմերի կիրառմամբ:

Վերոնշյալներով պայմանավորված՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 29.09.2020թ.-ի թիվ 26/26-1/14699-2020 գրությամբ «Մ. Բուատ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/231 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**